Ծրագրի արդյունքները՝ 2017 թ-ի սեպտեմբերի դրությամբ

- ✓ Արագածոտնի և Շիրակի մարզերի 7 համայնքներում էրոզացված համայնքային հողերի 164 հա-ն ցանկապատվել է, որից 90 հա-ն անտառապատվել է:
- ✓ Լեռնային շրջաններում անտառապատման համար կոնտեյներացված տնկիներն ապահովում են ավելի բարձր կպչողականություն, քան բաց արմատային համակարգով տնկիները:
- ✓ Կարճաժամկետ եկամուտի հնարավորությունը՝ հատկապես ազնվամորու մշակումից, լավ խթան է հանդիսանում անտառապատված հողատարածքները խնամելու համար:
- ✓ Իրականացվել է բիոինժեներական 5 միջոցառում: Տեղադրվել են արևի էներգիայով գործող էլեկտրական ցանկապատեր՝ որպես ավանդական ցանկապատերի ժամանակակից այլընտրանք:
- ✓ Համայնքային անտառապատման մոտեցումը ամբողջովին նոր է Հայաստանում: Պիլոտային համայնքները և մարզպետարանները շահագրգռված են անտառ հիմնելու և որոշումների կայացմանը մասնակցելու հարցում:

Տնկված կաղնի

Հրատարակվել է

Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH–ի կողմից

Գրանցված գրասենյակներ՝ Բոն և Էշբորն, Գերմանիա

Կենսաբազմազանության Ինտեգրված Կառավարում Հարավային Կովկասում, ԿԻԿ

www.biodivers-southcaucasus.org/armenia/

ԳՄՀԸ (GIZ) Հայաստանյան գրասենյակ

Հասցե՝ Բաղրամյան 4/1, 0019 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 581877
Կայք՝ www.giz.de
Էլ. հասցե՝ ibis@giz.de

Նկարներ՝ © ԳՄՀԸ (GIZ) ԿԻԿ Հայաստան
Քարտեզ՝ © ԳՄՀԸ (GIZ) ԿԻԿ Հայաստան

Սեպտեմբեր, 2017

Հղումներ

Շիրակի մարզի պաշտոնական կայք՝

http://shirak.mtad.am/about-communities/

Արագածոտնի մարզի պաշտոնական կայք՝

http://aragatsotn.mtad.am/general-information/

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ)՝

http://www.armstat.am/file/Map/MARZ_02.pdf

http://www.armstat.am/file/Map/MARZ_08.pdf

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

WITH FUNDING FROM AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ (ԿԻԿ)

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԷՐՈԶԻԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԻԼՈՏԱՅԻՆ ՄԱՐԶԵՐ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԵՎ ՇԻՐԱԿ



Արագածոտնի մարզ

Աշխարհագրական դիրք. Մարզը գտնվում է Հայաստանի արևմուտքում և զբաղեցնում է 2,753 կմ² տարածք (ՀՀ-ի ամբողջ տարածքի 9.3 %-ը): Մարզը երեք կողմից շրջապատված է լեռներով: Արագած լեռը (4,090 մ) Հայաստանի ամենաբարձր գագաթն է:

Կլիմա. Կլիման աչքի է ընկնում ցրտաշունչ ձմեռներով և տաք ամառներով: Տարեկան տեղումների քանակը բարձրադիր վայրերում 850-900 մմ է, իսկ ծովի մակերևույթից մինչև 1000 մ բարձրության վրա՝ 300 մմ:

Բնակչություն. 141,000 մարդ՝ 2016 թ-ի տարեսկզբի դրությամբ:

Տարածքային ստորաբաժանումներ. 111 գյուղական և 3 քաղաքային համայնք՝ 2016 թ-ի տարեսկզբի դրությամբ:

Շիրակի մարզ

Աշխարհագրական դիրք. Մարզը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևմուտքում և զբաղեցնում է 2,680 կմ² տարածք (ՀՀ-ի ամբողջ տարածքի 9 %-ը):

Կլիմա. Գտնվելով ծովի մակերևույթից 1,500-2,000 մ բարձրության վրա՝ Շիրակի մարզը Հայաստանի ամենացուրտ տարածաշրջանն է, որտեղ ձմռանն օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է -46 °C-ի: Տարեկան տեղումների քանակը հասնում է մինչև 700 մմ-ի:

Բնակչություն. 243,200 մարդ՝ 2016 թ-ի տարեսկզբի դրությամբ:

Տարածքային ստորաբաժանումներ. 116 գյուղական և 3 քաղաքային համայնք՝ 2016 թ-ի տարեսկզբի դրությամբ:

Պիլոտային համայնքներ

Արագածոտնի մարզ	Շիրակի մարզ
Արայի	Հառիճ
Գեղաձոր	Մեծ Մանթաշ
Հնաբերդ	Նահապետավան
Լուսագյուղ	Փոքր Մանթաշ
Քուչակ	Սարալանջ

Հողօգտագործումը պիլոտային համայնքներում (հա)



Գծապատկերը կազմվել է ՀՀ ԱՎԾ-ից ստացված տեղեկատվության հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by: giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

WITH FUNDING FROM AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

Նախնական տեղեկատվություն

- Էրոզիայի դեմ պայքարի միջոցառումների նպատակով թիրախային համայնքներն ընտրվել են Արագածոտնի և Շիրակի մարզերում՝ Արագած լեռան շրջակայքում:
- Էրոզիոն բնույթի խնդիրները և աղքատության մակարդակը նշված մարզերում ամենաբարձրն են:
- Խորհրդային տարիներին անտառապատման միջոցով էրոզիայի ռիսկերի նվազեցման որոշ քայլեր են ձեռնարկվել պետական անտառային հողերում:
- Հայաստանի անկախացումից ի վեր, բնական պաշարների համակարգված կառավարում չի իրականացվել:

Էրոզացված հող. Հնաբերդ համայնքի տարածքում

Ոչխարների արածեցումը արոտավայրում

- Ունենալով փոքր անտառածածկ՝ երկու մարզերն էլ մեծապես կախված են գյուղատնտեսությունից և անասնապահությունից:
- Ընտանի կենդանիների չվերահսկված արածեցումը, հատկապես զառիթափ լանջերին, նվազեցնում է արոտավայրերի արտադրողականությունը և արագացնում էրոզիոն գործընթացները:
- Դեգրադացված հողերի վերականգնումը հնարավոր է միայն ցանկապատման միջոցով արածեցումը բացառելու դեպքում:
- Անտառապատման տարածքների բարձրությունը ծովի մակերևույթից 2000-2200 մ է, որով պայմանավորվում են անբարենպաստ կլիմայական պայմանները (շարունակական ուժեղ քամիներ, տևական չոր ամառներ, իսկ ձմռանը՝ տևական սառնամանիքներ):

- Չնայած բազմաթիվ մարտահրավերների՝ բնակչությունը ցանկանում է անտառ հիմնել և աճեցնել:
- Համայնքային մակարդակում էրոզիոն ռիսկերի նվազեցման և մասնավորապես համայնքային հողատարածքներում անտառապատման մեխանիզմների զարգացումն ամբողջովին նոր է Հայաստանում և կրում է պիլոտային բնույթ:
- Բնական պաշարների և կենսաբազմազանության պատշաճ կառավարման մասին տեղական բնակչության իրազեկման բարձրացումը ԿԻԿ ծրագրի հիմնական նպատակներից է:
- Պիլոտային գործողությունները կարևոր փորձ են ապահովում հետագայում դրա տարածման համար:

Պաշտպանական նշանակության բնական կաղնու անտառ Լուսագյուղում

ԿԻԿ ծրագրի միջոցառումները

Կաղնու տնկում
Սարալանջ համայնքում

Անտառապատում էրոզացված հողերում

- Դեգրադացված հողերում ծառեր տնկելը օգնում է կայունացնել և պաշտպանել հողերը, նվազեցնել ջրի հոսքի արագությունը, մեծացնել ջրի ներթափանցելիությունը՝ նվազեցնելով էրոզիայի ռիսկը:
- Նպատակը՝ 200 հա էրոզացված հողատարածքի ցանկապատումը և անտառապատման եղանակով էրոզիայից պաշտպանումն է:
- Տարածքների ընտրության տեխնիկական չափանիշներն են՝ էրոզիայի ռիսկի աստիճանը, հողային պայմանները, դիրքադրությունը, ոռոգման ջրի հասանելիությունը:
- Տարածքների ընտրության սոցիալական չափանիշներն են՝ տեղական բնակչության կողմից նյութերով ու աշխատուժով աջակցելու պատրաստակամությունը և շահագրգռվածությունը:

- Համայնքների և ԳՄՀԸ-ի միջև դերերն ու պատասխանատվությունը սահմանված են փոխըմբռնման հուշագրերում (ՓՀ):
- Հողատարածքների առանձնահատկություններին համապատասխան փորձարկվել են տարբեր ծառատեսակներ և տնկման սխեմաներ:
- Տեղական բնակչության համար կարճաժամկետ եկամուտի հնարավորություն ստեղծելու նպատակով տնկվել են կարճ ժամկետներում բերք ապահովող թփատեսակներ՝ օրինակ ազնվամորին և չիչխանը:
- Կարևոր է, որ ծրագրի ավարտից հետո համայնքները սեփականության զգացում ունենան տարածքների և դրանց խնամքի հարցում:

Բիոինժեներական միջոցառումներ

- Բիոինժեներական միջոցառումներից են ինժեներական նախագծերի իրականացումը՝ օգտագործելով կենդանի նյութեր (բույսեր, սերմեր), դասական ինժեներական աշխատանքներին համարժեք մատչելի այլընտրանքի կիրառումը, որոնք օգտակար են հատկապես լանջերի կայունացման և էրոզիայի վերահսկման համար:

Փայտե գերաններով
դարավանդների հիմնում Լուսագյուղում

Էլեկտրական ցանկապատի տեղադրում
Սարալանջում

- Էրոզացված նախրաքարշի ճանապարհի բուսածածկի վերականգնման համար կիրառվող մեթոդները ներառում են փայտե գերաններով դարավանդների հիմնում, մուլչապատում և գոմաղբի տարածում:
- Տեղադրվել են արևային էներգիայով էլեկտրական ցանկապատեր՝ տարածքները կենդանիներից պաշտպանելու նպատակով: Սրա առավելությունն այն է, որ տարածքի վերականգնումից հետո էլեկտրական ցանկապատերը կարող են հանվել: